

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԻ, ԿՅԱՆՔԻ ՈՒ ԿԵՆՑԱՂԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
(ԸՍՏ 2000-2002, 2008-2016 ԹԹ. ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ)**

Լ. Խ. ՂՈՒԵՋՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

Ա. Ս. ԲԱԳՈՅԱՆ

ԳՊՀ դասախոս

1829-30-ական թթ. Բայազետից ներգաղթում է մոտ 240 ընտանիք և բնակություն հաստատում Սևանա լճի ավազանում՝ հիմնադրելով Նոր Բայազետը: Այդ ընտանիքները, պահպանելով իրենց նախնիների ավանդույթներն ու սովորույթները, իրենց հետ բերում են ինչպես գավառին բնորոշ կենցաղային սովորույթներ, այնպես էլ հոգևոր մշակութային բազում արժեքներ:

1996թ. բնակավայրը վերանվանվում է Գավառ:

Նոր Բայազետ քաղաքի և ամբողջ գավառի ազգագրության ու բանահյուսության հանդեպ հետաքրքրությունը սկսել է 19-րդ դարի երկրորդ կեսերին: Շնորհիվ անվանի բանագետ – բանահավաքների, սկսած 1880 - ական թվականներից, գրառվում և հրատարակվում են մեծ քանակությամբ բանահյուսական, ազգագրական և ժողովրդագրական նյութեր, գրական – պատմական աշխատություններ¹:

Մեր կողմից Գավառի և նրա տարածաշրջանից բանահյուսական և ազգագրական նյութերի գրառումն սկսվել է 2000-ական թվականներից՝ Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտարշավներից, իսկ 2008-2014թթ-ին՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դաշտային աշխատանքների ծրագրի շրջանակներում:

Նոր Բայազետն (1959 թ. Կամո, այժմ՝ Գավառ) ունեցել է հարուստ ժողովրդական բանահյուսություն, որի զգալի մասն այսօր, կապված հասարակական, քաղաքական ու տնտեսական մեծ տեղաշարժերի հետ, գրեթե մոռացվել է: Խոսքը վերաբերում է հատկապես քնարական բանահյուսության մի քանի տեսակներին՝ սիրերգեր, պարերգեր, ծիսական երգեր, որոնք այսօր կամ չեն հիշում, կամ էլ առանձին գյուղերում հիշում են միայն հին սերնդի ներկայացուցիչները: Ինչպես հայոց ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Գավառում համեմատաբար կենսունակ են վիպական ժանրի ստեղծագործությունները, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երգիծական զրույցներն ու զվարճախոսությունները, առած – ասացվածքները, օրհնանքները,

անեծքները, սնահավատական գրույցները և պատմական ավանդությունները:

Ծիսական բնույթի երգերի մի նմուշ ենք գրի առել Գավառ քաղաքում 2002 թ. (ասացող՝ Լիդա Պիպոյան, ծնվ.1920): Դա երաշտի ժամանակ կատարվող «խուշկուրորիկի» երգն է: Մարդը երաշտի դեմ պայքարելու համար դիմում էր ծիսական արարողություններին: Հնում, ինչպես վկայում է բանասացը, ցանքսը պահպանելու հզոր միջոց էր մատաղ անելը կամ «գետը մի քանի անգամ վարելը»: Կանայք լծվում էին գութաններին, յոթ անգամ «վարում» գետի հունը հոսանքին հակառակ ուղղությամբ, յոթ անգամ հոսանքի ուղղությամբ, ապա լայնությամբ: Ստացվում էր խաչ: Երաշտի դեմ պայքարելու միջոց էր նաև էշի գլխին ջուր լցնելը և այլն:

Ծիսակատարության ընթացքում երեխաներն էլ իրենց պարտականություններն ունեին: Կանայք «խուշկուրորիկ», այսինքն՝ փայտե տիկնիկ էին պատրաստում, զգեստավորում (կարմիր շոր էին հագցնում) և տալիս էին երեխաներին, որոնք տիկնիկը, պտտեցնելով տնետուն, մատաղ հավաքելով երգում էին.

Խուշկուրորիկն էկել ա,
Կարմիր (շալե) շապիկ խաքել ա,
Կարմիր գոտիկ կապել ա,
Ձու տվեք թաթը դնենք,
Եղ տվեք պորտը քսենք,
Ջուր բերեք գլխին լցենք,
Անձրև գա արտերը խոնավնան:

Որոշ գյուղերում (Կարմիր, Գեղարքունիք, Արծվաքար թաղամաս) ավագ սերնդի մարդիկ դեռ հիշում են «Գյուլումի» երգեր, որոնք երգվում էին Համբարձման տոնին: Դրանք վիճակահանման երգեր են, որոնցով կանայք ու աղջիկները գուշակում էին իրենց բախտը.

Գետը մտա, խոր ա,
Քաթան շաքիկս թագայա,
Խաբար տարեք իմ յարին,
Ես օլքա – օլքա կուրա: (ասացող՝ Ա.Ավետիսյան, ծնվ. 1922թ.,

Արծվաքար թաղամաս)

Անմիջական են այն խաղիկները, որոնցում արտացոլված են դեռատի աղջիկների ապրումները, խինդն ու ուրախությունը.

1. Ժամի դռան ավելը,
Ի՞նչ եմ անում բարևը,
Թոբուն – թոբուն դուս հարեք,
Ես կջոկեմ լավերը:

2. Չայի կրաղ, գետ՝ կանաչ,
Ու՞ր էս էթում անճանաչ,
Ջեբիդ խանգուրձին(կապոց)
մեռնեմ,
Մեկն ալ ա, մեկն՝ կանաչ:

3. Խաց եմ խորե խորերով,
Ձենս ա հընգե ծորերով,
Ճրագ շեման կվառի,
Դուշմանը դռանը պադոի:
(ասացող՝ Կ.Խաչատրյան, ծնվ.
1927թ., գ.Գեղարքունիք)

Հացառատ թաղամասի բնակիչ, 1932թ. ծնված Հրաչիկ Մադոյանից գրի ենք առել «Սիրոյի մասին» սիրերգը: «Բիճա Սիրոն աստվածային սիրո ու վայելքի մարմնացում էր, խորհրդանիշ: Դեռևս նրա կենդանության ժամանակ շատ եկվոր գրականասերների, գրողների, լրագրողների, ազգագրագետների եմ պատմել, որ նրա արտառոց կյանքը դարձնեն իրենց ստեղծագործության թեմա: Չարեցին», - ասում էր բանասացը: Շտկելով իրավիճակը՝ սիրով ներկայացնենք մի հատված Հ.Մադոյանի՝ Սիրոյի մասին պատմությունից:

Սիրոն ամուսնացել էր մի ռուս աղջկա՝ Վալյայի հետ, սակայն ավանդապաշտ և նահապետական գյուղը չէր ընդունել օտարին: Վալյան հեռացել էր գյուղից: Թեև Սիրականը (Սիրոն) ամուսնացել էր երկրորդ անգամ, բայց մինչև իր կյանքի վերջ սիրել ու փնտրել է իր Վալյային (Վառուշկային): Սիրոն, ում ժողովուրդը «ծուռ» մականունն էր կնքել, շաբաթվա ընթացքում մեկ կամ երկու անգամ սեփական երգով հաշվետու է լինում իր Վառուշկային:

Իր կյանքի հաճելի ու տհաճ դեպքերը կրքոտ երգերով պատմում էր նրան, կիսվում նրա հետ.

Գեղով կասեն Սիրոն ծուռ ա,
Սիրոն ծուռ չէ սավդալույա (սիրահար),
Լա՛յ, լա՛յ, քեզի մեռնեմ,
Հոգիս կտամ, քեզի կառնեմ:

Հախոյ Կարոն ճար չտալում,
Գուրոյ Վարթոն ճաշ չտալում՝,
Լա՛յ, լա՛յ, լա՛յ իմ Վառուշկա,
Քեզնից էն յան արև չկա,
Ախ դարդերս քեզ եմ ասում,
Իմ հոգու տուն, իմ սրտի սուն:

Այդ օրը Կարոյի բոստանի պատը փլվել էր, լցվել Սիրոյի բոստանը: Որդին հավաքում և նորից է շարում պատը: Սիրոյի կինը բողբոջում է, թե ավելի ետ դնի պատը, քան կար: Իսկ ինքը՝ Սիրոյի կինը (Վարդ) նույն օրը խնոցի էր հարում: Սիրոն ուզում էր կարագ ուտել, կինը չէր տալիս:

Տանլրի կանաչ քարափում
Առտի խոճերն ի կապում
Գևորքն լոկվ կրեց,
Հակոբն աշխօր չգրեց
Տանլրի, տանլրի Վառոշկա,
Իմ գլխի թագՎառոշկա,
Իմ սրտի դարդ Վառոշկա:

Կնոջ վրա բարկացած պահերին երգ – բողոք է ասել.

Ձիթով չլեն դեմս դրին.
Քոռ Վարթոյին վրես գրին,
Ձիթով չլեն կերցրեցին,
Վառթին ընծի կացրեցին:

Հրաչիկ Մադոյանի երկացանկում զգալի տեղ էին գրավում նաև հայ երկրագործի, շինականի աշխատանքի գործընթացում ստեղծված և նրան ուղեկցող երգերը:

Բերենք ջրաղացների հետ կապված երգերից մեկ օրինակ, որտեղ շեշտվում է աշխատավորի անհեռատեսությունը.

Դընգ – դընգ դընգով ջաղաց,
Կոտ ու կես ալուր աղաց,
Էնել տվեց պնդկի խաղաց:

Ժողովրդական մարմնամարզության ակնառու դրսևորումներ են մանկան լոգանքի երգերին զուգորդված որոշակի շարժումներն ու մերսումը: Մարզումները սկսվում են երեխայի վզից՝ երկնավզիկ անելով.

Երկնավզիկ,
Թափ տու ջրիկ,
Շլկա մսիկ,
Ջաղամաթի (աշխարհ) քունը քեզի,

և վերջանում վերջույթները մերսելով, որոնց զուգորդվում են քառյակներն ու բարեմաղթանքները, որոնք էլ հիմնականում ասվում են ժողովրդական նրբամիտ հումորով.

Վոռ տփեմ, վոռ ջոչնա,
Խլղին պակսի իմ տղին ջոչնա,
Վոռ՝ դմակ, տոտ՝ գոտնակ,
Իշխանների խելքը քեզի,
Խավերի քունը քեզի: (ասացող՝ Հ.Մադոյան)

Խորապես հուզական և թախծոտ է Գեղարքունիք գյուղից Կանդուխտ Խաչատրյանից (ծնվ. 1927թ.) գրառած կալանավորի մասին երգը, որի հիմնական բովանդակությունը կալանավորի ծանր կյանքն է.

Բերդի դուռը կամար – կամար,

Արև- լուսին վրես խավար,
կարոտը.
Եփ կըթռնի չորսը տարին,
Էթամ խասնեմ իմ մէ բալին,
ապրումները.
Բերդի մէջն ախ ու վախ էր,
Շատը թուրք էր, քիչը հայ էր,
Ընծի համար սաստիկ ցավ էր,
Ախ,՝ ադէ ջան, դժվար չէր, ինչ էր,
սիրած յարին կորցնելու վախը.
Մինչև տարիքս լրանա,
Սիրած յարս կամուսնանա,
և բաժանման պատճառ հանդիսացողը.
Հավլաբարում ձյուն էր գալում,
Իսկ Պլեխանում պայծառ արև,
Ինձ քեզանից բաժանողը,
Ախ՝, մերիկ ջան, մեր Հայկոն էր:

1941 թվականին ծնված Համեստ Գևորգյանի հուշերում պահպանված է «Սաքոյի մոր կատակերգը», որից ներկայացնենք մեկ հատված.

Մատաղ հըլնեմ իմ Սաքոյի չարխներին, չորբներին,
Անծոտ վզին, ծակ քոլոզին, պապիլոզին,
Իմ Սաքոնը բոյ ու բուսով, շեկ մորուսով,
Իմ Սաքոնը գնաց տավար, կերավ ձավար,
Հընգավ փորցավ,
Թունդրա մեջը վառի փթիր,
Որ իմ Սաքոն կախվի թունդիր,
Հառավտուն կեթա նախիր,
Օհո՛ կանա, չոշո կանա իմ Սաքուլը:

Գավառի տարածաշրջանի վիպական բանահյուսության մեջ առանձնակի տեղ են գրավում սնահավատական գրույցները, բարի և չար ոգիների, երևակայական էակների մասին, որոնց ժողովուրդն անվանում է «Դէլվաթ», որն անտեսանելի կերպով ապրում է տան որևէ անկյունում, երբեմն տանտերերին երևում է մարդու, կենդանու (օձ, էջ) և այլ կերպարանքով: «Ըտու խմար էլ գիշերները տախտը չեն ավլում: Եթե ավլում են էլ աղբը, գիշերով չեն թափում, որովհետև տան խերը, բարաքեն, այսինքն՝ դէլվաթը տնից կփախնի: Տան մեջ կոիվ, դավի չպտի հըլնի, դէլվաթը կխռովի կըփախնի», - մեծ հավատով պատմում էր բանասաց Համեստ Գևորգյանը:

Տարեց մարդիկ՝ իբրև ականատես, հավատով են պատմում ջաջերի, սատանաների մասին զրույցներ, որոնք պատկերվում են մարդակերպ, մեծ մասամբ կանանց կերպարանքով, և նշում էին նաև գործողության տեղն ու ժամանակը: Նորատուս գյուղի բնակչուհի, 1939 թ. ծնված Էմմա Խաչատրյանը պատմեց Նորատուս գյուղի մի բլուրի մասին, ուր բնակվում են սատանաներ: Իսկ գյուղի Սաղաթելենց տան գերդաստանի մորը հաջողվել է սատանա բռնել, և բերեց հետևյալ զրույցը, ըստ որի՝ տան անդամները նկատում են, որ գիշերները ձին գոմում անընդհատ վազում է, առավոտները քրտնած է, իսկ բաշն ու պոչն էլ իրար են կապված: Հասկանում են, որ դա սատանայի արած է: Բերում ձիու մեջքին կուպր (ծյուֆ) են քսում, իսկ իրենք թաքնվում են: Կեսգիշերին սատանան գալիս, նստում է ձիու վրա և չի կարողանում պոկ գալ: Տատը վրա է հասնում և մի ասեղ է խրում սատանայի հագուստի մեջ: Տեսնում են, որ մի գեղեցիկ աղջիկ է: Սատանա աղջիկը յոթ տարի շարունակ ապրում է այս տանը և ծառայում նրանց: Յոթ տարի հետո աղջիկը աղաչում է, որ իրեն ազատ արձակեն: Տան անդամները համաձայնում են նախապես երդվեցնելով, որ իրենց «յոթը պորտին» վնաս չտա: Երբ ասեղը հանում են, սատանան անմիջապես անհետանում է:

Ուշագրավ են մեր կողմից գրառված բանահյուսական այն նյութերը, որոնց գործող անձինք իրական կերպարներ են, որոնք իրենց սրամիտ, խելացի և արտասովոր արարքներով ակամայից դարձել են կենցաղային զրույցի և այս կամ այն ասույթի կերպար – խորհրդանիշ: Գավառում և նրա տարածաշրջանում այդպիսի կերպարներից են Գառզոյի Արամը, Շուքրու Գվոն, Բարեկամը, Դադոյի Միլիտը, Տերտերանց Արտավազը, Գափոյենք և ուրիշներ:

Սովորաբար զվարճախոսությունների հերոսները բնութագրվում են տվյալ միջավայրին բնորոշ յուրահատկություններով. օրինակ՝ լոռեցին՝ իր միամտությամբ ու դյուրահավատությամբ, գավառցին՝ իր օղեխմությամբ, որը զվարճախոսություններում չափազանցված դրսևորումներով է ներկայացվում: Եվ այդ կերպարներից յուրաքանչյուրը դառնում է որոշակի իրողության գեղարվեստական մարմնավորողը:

«Հըլը խմա արաղը, տես խոլոռը (նկատի ունի հիվանդությունը՝ խոլերիան) գքա՞ քո բոլորը», - ասել է գավառցի Բոշի Սուրիկը, երբ նրան հայտնել են գրիպի մոլեգնող համաճարակի մասին: Հիշյալ ասույթն իր սրամտությամբ լայն տարածում է գտել Գավառում, և ցարդ այն գործածական է:

Կենցաղային զրույցից է սերում «05.40ԱԳ» դարձվածքը, որը խորհրդանշում է քյավառցու մեքենայի համարները:

Գառզոյի Արամին գտնելով փողոցում հարբած-ընկած վիճակում՝ մտածում են, թե մեքենայի տակ է ընկել: Արամը ոչ միայն հաստատում է

այդ վարկածը, այլև ներկայացնում է մեքենայի համարը՝ 05.40 ԱԳ: Ոստիկանները, չգտնելով նման համարանիշով մեքենա, դիմում են Արամին:

-Բիժա, կարող ա համարը շշկոել էս:

-Չէ՛, լավ հիշում եմ, - պատասխանում է Արամը,- 0,5-ը էտի կէս լիտրն ա, 40-նն էլ հիրա գըրադուզն ա, ԱԳ-ն էլ Արամ Գառգոյանն ա, էտ մաշինի տակն էլ հնգէր եմ:

«Հելավ Շուքրու Գվոյի տունը»: Գվոն ուտող-խմող մարդ է եղել: Մի անգամ նվագողների հետ տուն է գալիս և կնոջն ասում.

-Կնի՛կ, խաց բե:

-Չկա՛,- ասում է կինը:

-Պանի՛ր բե:

-Չկա՛:

-Արա՛ղ բե:

-Չկա՛:

-Տղե՛րք ջան,-ասում է Գվոն,- նվագեք՝ Շուքրու Գվոյի տունը քար ու քամբախ ա...

Այժմ էլ, երբ մեկի տանը ինչ-որ մի բան պակասում է, չի լինում, ասում են՝ «Հելավ Շուքրու Գվոյի տունը»: Կամ էլ երբ մեկը ծանոթի, բարեկամի տուն չի գնում, իսկ հետո պատճառաբանում է, թե չի ցանկացել «նեղություն տալ» (հյուրասիրության առումով), անպայման լսում է հետևյալ պատասխանը. «Կարո՞ղ ա մեր տունը Շուքրու Գվոյի տունն ա» :

«Ամեղ (առանց պատճառի) տեղը բողկ չեն ուտի» ասույթի գործող անձ Հարփենիկ զալոն, տեսնելով, որ հարևանի տանը բողկ են կտրում, հարցնում է.

-Խա՞ջ էք դրե:

Ասում են՝ չէ:

-Մի՞ս էք էփե:

-Չէ:

-Յախնի՞ էք էփե:

-Չէ:

-Բը ամեղ տեղը բո՞ղկ եք ուտում:

Ու մինչ օրս էլ, եթե որևէ մեկն առանց պատճառի մի բան է անում կամ ասում, անպայման ասում են. «Ուրեմն մի բան կա, թե չէ ամեղ տեղը բողկ չեն ուտի»:

Իր անհանդուրժողական ու անզիջում բնավորությամբ Գավառում հայտնի էր Կափանչու Գասպարը, որի հետ կապված՝ որոշ դիպվածներ ու արարքներ ևս դարձվածքների հորինման պատճառ են դարձել:

Գասպարը փակել է քաղաքից (Գավառ) գյուղ տանող ճանապարհը, որ գյուղացիները չմտնեն քաղաք և չանցնեն իր տան

ճանապարհով: Այդ պատճառով էլ, երբ որևէ մեկը փակում է ճանապարհը կամ արգելում իր տարածքով անցնել, գործածվում է «Կափանչու Գասպար» դարձվածքը: Մի անգամ Գասպարը տեսնում է, որ գյուղացիներից մեկը, կրկնակոշիկներ հագած, գալիս է քաղաք: Գասպարն այդ մարդու ոտքերից ստիպողաբար հանում է կոշիկները՝ ասելով. «Քյոփօղլու՛ գյադա, մեր ադեն վոտները բոբիկ կախեր ա թունդիրը, դու սուր սոլի՞ ես խաքե... » (սուլ սոլի՝ «կոշիկ կոշիկի վրա»): Մինչ օրս, երբ մեկը օրվա մեջ մի քանի կոշիկ է փոխում կամ պարծենում ունեցած կոշիկների քանակով, ասում են. «Քիչ ա մնում՝ սուր սոլի խաքնի» կամ «Սուր սոլին չխաքնես»:

Նմանատիպ կենցաղային գրույցներից ծագած ասույթների, դարձվածքների բազմաթիվ օրինակներ ևս գրառել ենք, որոնց այս հաղորդման շրջանակներում հնարավոր չէր անդրադառնալ: Նշենք, որ նմանատիպ ասույթների, դարձվածքների հորինման հիմնական աղբյուրը իրական կյանքում կատարված իրողությունների գեղարվեստական դրսևորումներն են, և յուրաքանչյուր ասույթ արդյունք է տվյալ տարածաշրջանում տեղի ունեցած կենցաղային դեպքերի, իրադարձությունների. ասույթը, անջատվելով բուն կենցաղային գրույցներից, վերածվում է դարձվածային ընդհանրացման:

Գավառի տարածաշրջանում տարածված են «Փոփոլի խավիժ», «Փոշման Հագո», «Միրզոյ ձմեռ», «Մադոյ ամառ», «Գափոյենց տուն», «Թառոյենց տուն», «Գալուստի կատու», «Կուղեյենց շուն», «Կշլղա տավար», «Ճնճուղ կնդոցի», «Իշի զատիկ» և այլ դարձվածքները, որոնք բոլորն էլ ունեն իրենց համապատասխան պատճառական գրույցները և հիմք են դարձել տվյալ դարձվածքի ծագման, ձևավորման և լայն տարածման համար:

Մարդկանց մականուններով կոչելը լայն տարածում ունի Գավառում և համայնքներում: Այդ մականունները առանձին անհատների խառնվածքի, բնավորության, այս կամ այն գծի, կամ առանձնահատուկ սովորությունների արտահայտություններ են: Մականունների մի մասը դարձել է ազգանուն և հաստատել տվյալ տոհմի ինքնությունը, իսկ մյուս մասը մնացել է որպես մականուն՝ վերաբերելով միայն տվյալ անձին: Օրինակ՝ «Բոբլոզ», «Վոռ», «Լոփո», «Ձռակ», «Բմբլախան», «Ճոկենք», «Աբաչոնք», «Ջաղջընի», «Ձավրակերենց», «Բշկով», «Կյաճե», «Պալեր», «Բզուզ», «Նաշիկարով»¹:

¹ Մականունները ևս գրառվել են իրենց համապատասխան պատճառական գրույցներով հանդերձ:

Գեղարքունիք գյուղի բնակչուհի Կանդուխտ Խաչատրյանից գրառել ենք հանգավոր մականուններ, որոնցից պարզ է դառնում, որ տան անդամներից բոլորն ունեցել են արատներ.

Քոչո Բաքո,
Քոռ Մաքո,
Գեշ Պապո,
Լոշտո Ժուչո,
Փընթփընթ Միրան,
Ճողուկ Գեղեցիկ,
Տոտո Հասմիկ,
Թոփալ Անիկ,
Արկոտ Գոհարիկ:

Հացառատ թաղամասի բնակիչ Հրաչիկ Մադոյանը ևս մեզ ներկայացրեց մականուններ, որոնք տարածված են և բնորոշում են տվյալ տոհմերին.

Հերզեն, անխելք Դվոյենք,
Ըտոնց նման Մադոյենք,
Կարճ ու կոլոտ Այվազենք,
Սթից հարստցող Կնյազենք,
Լվից ճրաքու խանող լի Գփոյենք,
Ուզուն (երկար), ախմախ Ջավոյենք:

Մարդկային հարուստ կենսափորձի ու պատկերավոր մտածողության կուռ բանաձևային ստեղծագործություններ են առած-ասացվածքները, դարձվածքները, որոնք տարածված են Գավառում ու նրա համայնքներում և մեծ տեղ են գրավում առօրյա խոսակցական լեզվում: Ներկայացնենք Գավառի տարածաշրջանից գրանված ժողովրդական առած – ասացվածքների տարբերակների օրինակներ. «Ոչ թացի խեղ ա մերվում, ոչ չորի», «Հիրանց կապովի հավելին կուտա, հուրիշի գաթին անուն կդնա», «Քոչիկ էփել չգիդում, ուզում ա էթա հուրիշի խառնսին քիֆտա քցա», «Ձունը չոքում ա դուռը, Ջարդարի ճավիկ քաղելը բռնում ա», «Ասեղ զան փեղի ծերին խաց հավքա, բայց քեզի խպառտ պախա», «Ընենց կնիկ ա, որ շոռվեն յախնու տեղա հնցըընում», «Փթիրը վոր տաս, խացը ձեռից կառնես», «Խինգ մեթնոց իշից տաս մեթնոց քուռակ չեն ուզի» և այլն:

Ասույթային բանասիրության որոշ տեսակներ՝ անեծք – օրինանքներ, հանելուկներ, շուտասելուկներ, կայուն տեղ են գրավում բանասացների երկացանկում: Եթե բանասացները մեծ մասամբ հրաժարվում էին անեծքներ ներկայակացնել, ապա Կանդուխտ Խաչատրյանը ոչ միայն չհրաժարվեց, այլև խոստովանեց, որ միշտ էլ

անիծում է, բայց մեկ վատ մարդուն է անիծում, մեկ էլ՝ «էտ անտեր հորթերին», և սկսեց հանգավոր անեծքների շարանը.

Ջանդ կրակ հընգնի,
Լավ օր չտենաս,
Ախ անես, էրնեկ չանես,
Ձեռդ կուշտ փորիդ չդնես,
Յուռդ ու յուվեդ քանդվի,
Ձեր տները տների վրեն փայ ու բաժին հըլնեն:

Ուշագրավ է օրհնանքները: Դրանք խորիմաստ են և համակված են մարդասիրությամբ.

Սաղ հըլնեք, անփորձանք հըլնեք,
Ախրներդ խեր հըլնի,
Բարով – խերով ձեր կարիքները դառնան,
Տենաք՝ ուրխնաք:

Արևդ պայծառ հըլնի,
Ումբրդ՝ հերգեն:

Հնուց ի վեր հանելուկները կենցաղավարել են իբրև մարդու մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ, որպես ժամանցի միջով, որն այսօր էլ կենցաղավարում է թե՛ մեծահասակների, թե՛ փոքրերի շրջանում: Օրինակ՝

1. Մե կով ունեմ անգյալ ա,
Եկեղեցի,

Կոտըշները չանգալ ա,
Վորդե ասես կարածա,
Քարի բոլոր չարածա:

(գերանդի)

2. Մանդըր – մանդըր

Դանկով զանի, դուռը բացի,
Մտա մեջը խամբուրեցի,
Հելա կտուր քար թալեցի:

(ծմերուկ)

Ստալինյան շրջանի քաղաքական բռնաճնշումները դեռ չեն ջնջվել Սարուխան գյուղի ավագ սերնդի հիշողություններից և այդ ժամանակի դառը հիշողությունների մեջ հպարտորեն էին հիշում նաև այն օրը, երբ «հաշվեհարդար» տեսան Ստալինի արձանի հետ. համագյուղացի Թորգոմի մուրճով ջարդում են այն և քաշելով տանում դպրոցի բակում գտնվող զուգարանի մոտով: Այդ առթիվ գյուղացիները բանահյուսել են.

Անունս՝ Իոսիֆ,
Ազգս՝ վրացի,
Տեսքով՝ խելացի,
Քառասուն տարի Կրեմլում մնացի:
Արձանս դրին դիով ու զուռնով,
Հետո ջարդեցին Թորգոմի կոնով,
Քաշեցին, տարան ուբոռնու դռնով (դուռ- բակ)

Գավառի տարածաշրջանի վիպական բանահյուսության մեջ իր ուրույն տեղն ունի անեկդոտ – զվարճախոսությունները, որոնց սյուժեները ընդգրկում են մարդկային կյանքի բազմաթիվ ոլորտները՝ սկսած առօրյա բազմազան հարցերից, վերջացրած սոցիալական իրադարձություններն ու կենցաղային հարաբերությունները:

Տարածված են նաև տեղագրական և պատմական, սնահավատական, կենցաղային և կրոնաբարոյական հորինվածքներով ավանդազրույցները:

Մեր գրառումներում զգալի տեղ են գրավում մանկաշխարհում տարածված խաղերգերը՝ ձեռնախաղ, հաշվերգեր և այլն: Մանկական ձեռնախաղի երգերը տարիքային որոշակի սահմանափակում պահանջող խաղեր են, ուր երեխային կարելի է զբաղեցնել ձեռքերի ու մատների շարժումներով, որոնք զուգորդվում են համապատասխան երգային, խոսքային հատվածներով: Ձեռնախաղի երգերից տարածված է «դալար թաթիկ»-ը, «ծիվ - ծիվ»-ը, «տիտողիկը», ինչպես նաև ձեռքի մատներից յուրաքանչյուրի անվանադրումը. *ճկույթ, ճկտամեր (մատնեմատ), հերգեն Մարիամ (միջնամատ), աման լիզող (ցուցամատ), օջիլ ջարդող (բթամատ):*

Հաշվերգերն մանկաշխարհում ասվել են հաշվելու նպատակով, որոնք մինչև օրս էլ հիշյալ դերը պահպանում են մանկական խաղերի ընթացքում:

Օրինակ՝

*Ծիվի ծափուր, քոռ հաչափուր,
Հելի կտուր, մեր մաղը փուր,
Կտամ նողուլ, մե ճանգ մասուր,
Որ ջոջնամ հըլնեմ կիսուր,
Քէ կտանեմ մանկամսուր:*

Հաշվերգերն երբեմն անիմաստ թվացող կամ էլ օտար բառերի հարակցումից են առաջացել: Օրինակ՝

*Ակե – դուկե դմբստե,
Չարե – չուխկե լկստե,
Անտի կոճակ, ճան պլոճակ,
Ճան հարի ճուկ:*

Գրառել են նաև այսպես կոչված «այբբենական հաշվերգեր», որոնց առաջին տողը, սովորաբար, սկսվում է այբուբենի օգտագործմամբ, օրինակ՝ «Ա, բ, գ, դ, ե, զ Բաբայանի եզը փախավ, մորավ պարտեզը քաշեց ճղեց քարտեզը» և այլն: Խաղավարտին ուղեկցող հաշվերգերը սովորաբար ավարտվում են կայուն բառակապակցություններով՝ «դուս թոի», «դուս հելի», երբեմն նաև երգիծական բնույթի. *Ամենքն էթան հիրանց փուն, // Մուկն ու կափուն խերանց փուն:*

Երկրագործի համար հմայական գործություն ունեցող խոսքերը՝ աղոթքները, նույնքան գորավոր են, որքան հմայական ծիսակատարությունները, որոնք իրենց կենսունակությունը դեռևս չեն կորցրել: Օրինակ՝ երբ ինչ-որ մեկի կովը, ոչխարը կամ այլ կենդանի կատաղում է, վերցնում են հացը, աղ լցնում մեջը և աղոթում. «Տե՛ր ջան, անլեզու անասունա, հանգստություն տուր, ազատա չարից», հետո խաչակնքում են սպիտակ թելով թելած ասեղով և տալիս են անասունին, որ ուտի: Ուտելուց հետո անասունը հանդարտվում է:

Հողագործը առաջին անգամ սերմը ցանելիս արտահայտվում է հետևյալ բանաձև - ընդհանրացումով. «Մեկը խազար դառնա, // Աստված ջան, կարկուտ չտենանք, // Քաղուկ աղծուկ ցորենը կըսմէ՞ք արա իմ բալեքին»: Կամ կարտոֆիլը ցանելիս. «Աստված ջան, մենք տալում ենք խողին, // Խողից բանցր բերք ստանանք»:

Գյուղերում տարածված են հատկապես գորտնուկի, չար աչքի և վախի դեմ աղոթքները:

Բերենք չար աչքի դեմ ասվող աղոթքի մեկ օրինակ.

Աղոթեմ յոթը մատով, յոթը բթով,
Ալալոց, թալալոց, գելից, գազանից,
Կարիճից, չարիքից, չարից, չար մտքից:
Չար աչք չար փուշ լինի,
Չար աչք չար կրակ լինի:
Էջմիածնա վանքեր, Գեղարդա արնոտ վանքեր,
Սաքին ու սրբություն,
Քրիստոսի խաչում ու թաղում,
Պաշտում, պատարագներ,
Զնգզնգան ժամեր.
Ցավին փարատություն, ջանին առողջություն:
Չար աչք չար փուշ լինի,
Չար աչք չար կրակ լինի:
Թու, թու, թու:

Այսպիսով, մինչ օրս գրառված ազգագրական և բանահյուսական նյութերը ցույց են տալիս, որ դեռևս գոյատևում և կենցաղավարում են ժողովրդագիտական բազում նյութեր, և հետագա գիտարշավների ընթացքում նույնպես կարելի է գրառել բազմաթնույթ բանահյուսական և ազգագրական նյութեր: Բացի դրանից՝ ձեռք բերված նյութերը ոչ միայն կներկայացնեն առկա իրավիճակը, այլ նաև գիտական ուսումնասիրության առարկա կդառնա հետագա հետազոտողների համար:

Քանալի բառեր. վիպական բանահյուսություն, քնարական բանահյուսություն, ասույթային բանահյուսություն, մանկական

բանահյուսություն, ազգագրություն, տարածաշրջան, երկացանկ, կենցաղավարում, բանասաց, բանագետ – բանահավաք:

Օգտագործված գրականություն

1. Ազգագրական հանդես, XIV գիրք, Թիֆլիս, 1906:
2. Ազգագրական հանդես, XVI գիրք, Թիֆլիս, 1907:
3. Ազգագրական հանդես, XVII գիրք, Թիֆլիս, 1908:
4. Ազգագրական հանդես, XVIII գիրք, Թիֆլիս, 1909:
5. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 11, Գ.Միքայելյան, Նոր Բայազետ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
6. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Ռ.Գրիգորյան, Գեղարքունիք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
7. Հայ ժողովրդական ավանդություններ, Տիգրանայ Նավասարդյանց, I գիրք, Թիֆլիս, 1883:
8. Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 5, Տփլիս, 1889:
9. Սասնա ծռեր, աշխատասիրությամբ՝ Ս.Հարությունյան, Ա.Սահակյան, հ. Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979:
10. Սմբատյան Մ.արքեպ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետի գավառ, Վաղարշապատ, 1895:
11. Փիլոյան Ս., Կորած Մարգարիտ, Թիֆլիս, 1888:
12. Ղոնջյան Լ., Նոր Բայազետի ազգագրական և բանահյուսական մշակույթը բանագետ – բանահավաքների գրառումներում, Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, 2017, N4, էջ 345-356,
13. Ղոնջյան Լ., Ժողովրդական ասույթաբանության և ավանդական զրույցների փոխադարձ կապը (ըստ Գավառում գրառված նյութերի), Հայ ժողովրդական մշակույթ XVI, Երևան, 2014, էջ 393-400:
14. Ղոնջյան Լ., Բանահյուսական գրառումների անձնական արխիվ:

MANIFESTATIONS OF FOLK ART AND EVERYDAY LIFE IN GAVAR REGION (Based on the Results of Field Expeditions in 2000-2002, 2008-2016)

L. KH. GHREJYAN

PHD in Philology, Associate Professor

A. S. BAGOYAN

GSU Lecturer

General picture of ethnographic and folklore culture of nowadays Gavar region is presented in the article. The region was known for its rich

folklore, most of which today is almost forgotten due to social, political and economic changes. Particularly, either this refers to such kinds of lyrical folklore as ritual songs, dance songs, love songs, which today is forgotten, or in some villages, only some members of the older generation remember. In Gavar, as in many ethnographic areas, epic genre works are relatively viable, including satire and humorous tales, proverbs and sayings, blessings and curses, superstitions and historical traditions.

**ПРОЯВЛЕНИЯ НАРОДНОГО ТВОРЧЕСТВА, ЖИЗНЬ И БЫТ В
ГАВАРСКОЙ ОБЛАСТИ**
(по результатам полевых экспедиций 2000-2002гг., 2008-2016гг.)

Л. Х. КРЕДЖЯН

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ГГУ

А. С. БАГОЯН

Преподаватель ГГУ

В статье представлена общая картина этнографической и фольклорной культуры Гаварской области в наши дни. Область была известна богатым народным фольклором, большая часть которого сегодня почти забыта, по причине общественных, политических и экономических сдвигов. Это касается, в особенности, таких видов лирического фольклора, как обрядовые песни, танцевальные песни (наигрыши), любовные песни, которые сегодня или не помнят, или в некоторых деревнях помнит лишь некоторые представители старшего поколения. Как во многих этнографических областях, так и в Гаваре в сравнительном плане жизнеспособны произведения эпического рода, среди которых особый интерес представляют юмористические сказы и шутки, пословицы и поговорки, благословения и проклятия, суеверия и исторические предания.